ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴՑԻ ՍԱԴՈՒՆ Բ.Ի ԱԹԱԲԷԿ, ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՏԻՏՂՈՍՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐՆԵՐԻ (1256-1284)

ՌՈՒԲԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ
ruga52@mail.ru; arevikgapoyan@mail.ru

Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ.ը ԺԳ. դարի հայ աւատատիրական աւագանու նշանաւոր խորագէտ եւ իմաստուն քաղաքական դէմքերից է: Վիմական վաղագոյն տեղեկութիւնը Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ. իշխանի մասին յայտնում է ներկայիս Իջեւանի տարածաշրջանի Առաքելոց վանք յուշարձանախմբից 2 կմ. հիւսիս-արեւելք գտնուող Խնձորուտ գիւղատեղիի աւերակներում, պատուանդանի վրայ պահպանուած գեղաքանդակ Ս. Աստուածածին կոչուող խաչքարի բնագիրը[1]: Վիմագիրը թուագրւում է Չ (1251) թուականով: Համաձայն յիշատակագրի բովանդակութեան՝ նուաստ քահանաներ Յոհաննէսը[2], Գրիգորը[3] եւ Մարտիրոսը կանգնեցրել են Ս. Աստուածածինս՝ օգնութիւն պարոն, իշխանաց իշխան Սադունին եւ նրա որդի Պապացին. «*Ի թվիս **Չ** (1251)[4] Շնորհիւն ողորմութեամբն ԱՅ, մեք նվաստ քահանայքս Յոհաննէս եւ Գրիգոր, որդիք … Տր ԱԾ ողորմի Յոհաննիսի զի բազում աշխատեցաւ: Մարտիրոս կանգնեցաք զՍԲ ԱԾածինս յաւգնութիւն պարոն Սադունին իշխանաց իշխանին եւ որդո իւր Պապացին*»[5]: Ինչպէս նկատում ենք, Սադունը հանդէս է գալիս «իշխանաց իշխան» տիտղոսով, որն այստեղ, հաւանական է, պէտք է ընկալուի որպէս տեղական գլխաւոր իշխանաւոր, ինչպէս որ Յովհաննավանքի «ԹՎ ՉՂԹ (1350)» վաւերագրում նոյն տիտղոսով հանդէս է գալիս նաեւ Արագածոտնի նշանաւոր իշխան **Թէոյդոս** Չրքին Վաչուտեանը[6]:

Խնձորուտ գիւղատեղիի բնագրի մասին ուշագրաւ կարծիք է յայտնել հմուտ գրաբարագէտ, լեզուաբան-վիմագրագէտ Սուրէն Աւագեանը: Գիտնականի տեղեկացմամբ, բնագրի թուական Չ.ի բացուածքի հարթութիւնը

---

[1] *Դիւան հայ վիմագրութեան, պրակ, VI*, կազմ.՝ Ս. Աւագեան, Հռ. Ջանփոլադեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 219:

[2] Ըստ Աւագեանի՝ Յոհաննէսը խաչքարը կազմող վարպետն է (նոյն):

[3] Սրանք եղբայրներ են, որոնց հայրանունը ջարդուած-եղծուած է:

[4] *Դիւան, պրակ, VI*, էջ 220-221:

[5] Նոյն, էջ 219:

[6] «*Թվ ՉՂԹ … Ես Թէոյդոս մականուն Չրքին իշխանաց իշխան, որդի Անբերդեցի Քրդին իշխանաց իշխանին, որդի Տայիրին, թոռն Մեծ Քրդի, արի եւ քաջին Վ[Ա]ՉԷԻ*» (Կարօ Ղաֆադարեան, *Յովհաննաւանքը եւ նրա արձանագրութիւնները*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1948, էջ 92):

մեծ է, սակայն այն ջարդուած եւ եղծուած է, որտեղ ենթադրելի է մէկ տարի՝ տասնաւորի կամ միաւորի փորագրութիւնը: Իրաւացի է գիտնականը, որ Սադունը Չին (1250/51) պէտք է լինի երիտասարդ եւ դժուար թէ իշխանաց իշխան յորջորջուի[7], քանի որ նրա իշխանական դիրքի բարձրացումը, ինչպէս յիշատակում է պատմիչ Գրիգոր Ակնեցին՝ եղել է 1256ին, երբ Անդրկովկաս է եկել Հուլաւու իլխանը, եւ այդ թուականին կամ մէկ տարի յետոյ Մահկանաբերդցին ըմբշամարտում Մանգու խանի ահազդու ըմբիշին գետնել է եւ մեծարուել ու պատիւների արժանացել Հուլաւու իլխանից[8]: Մահկանաբերդցի իշխանը նման տիտղոսով է յիշւում նաեւ Առաքելոց վանքի մերձակայքի քանդակազարդ խաչքարի թիկունքի 13 տողանոց բնագրում. «*Ի թվիս հայոց :ՉԺՋ: (1267) իշխանութիւն մեծ իշխանաց իշխանին Սադունի եւ յառաջնորդութիւն մեծ վարդապետին Առաքէլի*»[9]:

---

[7] *Դիւան, պրակ, VI*, էջ 219:

[8] Գրիգոր Ակնեցի, *Պատմութիւն թաթարաց*, Տպ. Սբ. Յակոբեանց, Երուսաղէմ, 1974, էջ 48-49: Աւելի մանրամասն տես՝ Ռ. Գասպարեան, «Սադուն Բ. Արծրունի իշխանի գործունէութիւնը վիմագիր եւ մատենագիր աղբիւրների մեկնութեամբ», *Հանդէս ամսօրեայ*, 1-12:2018, էջ 379:

[9] *Դիւան, պրակ, VI*, էջ 211: Բնագրում Մահկանաբերդցին Մեծ իշխանաց իշխան է անուանուած, հաւանական է, 1267/68ին. պէտք է նկատի ունենալ իշխանի ճանաչուածութիւնը «Գիւրջիստանի վիլայէթում» (տե՛ս՝ ստորեւ): Իշխանը 1260ականների սկզբին (1260/61/62) Հորդայում՝ (Պարտաւ) խրոխտութեամբ դժուարին իրավիճակում արդարացրել է վրաց թագաւոր Ուլու Դաւիթ Վահրամուլի ապստամբութիւնը 1258-60ին. «*Սադունին իբրեւ թարգմանիչ բերին, որին Ուլուն շատ էր սիրում, մեծապէս պատիւներ տալիս...Սադունը բարոք թարգմանում էր, ձեւակերպում թագաւորի ասածները: Սադուն Մահկանաբերդցին լաւ էր ճարտասանում*», (*Վրաց ժամանակագրութիւն, (1207-1318)*, թարգ. հին վրացերէնից, առաջ. եւ ծանօթ. Պարոյր Մուրադեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1971, էջ 120: Մահկանաբերդցի իշխանը ոչ միայն «*խելացի մարդ էր, քաղցրալեզու, խանի մօտ ճարտասանութեամբ յաջողակ, լաւ ճարտասանող*», ինչպէս բնորոշում է վրաց անանուն հեղինակը, այլ իր բնատուր խելացիութեամբ ու բանիմացութեամբ կարողացել է սառնասրտօրէն ուղղակի համոզել ու արդարացրել մեղսակից, պարսաւելի վրաց թագաւորի գործունէութիւնը, որի համար, ինչպէս տարեգիրն է նշում վրաց թագաւոր Դաւիթը «*...իմաստութեան համար Դաւիթ թագաւորը եւս նրան պատիւ տուեց եւ Աւագի տանը [վերակացու] լինել պատուիրեց*» ...«*Դաւիթ թագաւորը եւս բազում երկրներ պարգեւեց նրան*» (նոյն, էջ 110, 129): Տարեգրի «*իմաստութեան համար Դաւիթ թագաւորը եւս նրան պատիւ տուեց*» արտայայտութիւնը պէտք է հասկանալ, որ իշխանը ճանաչուել է արքունիքի կողմից որպէս աւագ իշխան=իշխանաց իշխան: *Հին հայ իրաւունքի պատմութիւն* խորագիտակ Խաչիկ Սամուէլեանը մեկնաբանում է, որ աւատական աստիճանակարգի արտաքին ձեւը արտայայտւում էր գահերէցութեամբ կամ բարձերէցութեամբ: Արքունի արարողութիւնների ժամանակ աւագ եւ կրտսեր իշխանաւորները բազմում էին ըստ աստիճանակարգի, պահպանելով «բարձ եւ պատիւ»ի

Թուագիր յաջորդ տեղեկութիւնը Մահկանաբերդցի իշխանի մասին Աշտարակի «Ծակ խաչ» կոթողի ՉԺԷ (1268) վիմագիրն է: Յիշատակութեան համաձայն՝ տէր[10] Յուսամ (Յուսամ, (Հուսամ)[11] ձեռնաւորը[12] կանգնեցրել է կոթողն Արծրունի Սադուն Բ.ի «**յերկար կենաց**». «*Թվ. ՉԺԷ (1268) ի թագաւորութեան*[13]*... Ես տր Յուսամս, կանգնեցի զՍԲ Նշանս վասն յերկար կենաց պարոն Սադունին եւ զաւակաց իւրոց*»[14]:

Աշտարակ քաղաքի սահմաններում Սադունի անուան յաճախակի յիշատակումը վիմագրագէտ Սաղումեանը հիմնաւորում է, որ նշանաւոր այդ քաղաքն իբրեւ կալուածք՝ Բագրատունիներից անցել է սելջուկներին, ապա՝ Զաքարեանների գերիշխանութեամբ՝ Արծրունիների (եւ ոչ Վաչուտեանների) իրաւասութեան[15]: Ինքնին հետաքրքիր է, որ Սադունի անունը որպէս ճանաչուած իշխան հոլովւում է ՉԺԷ (1268)ին Աշտարակում:

Ուշագրաւ է նաեւ, որ աթաբէկ, տիտղոսով Մահկանաբերդցի իշխանը, վիմական աղբիւրների համաձայն, առաջին անգամ յիշատակւում է Նորատուսի Աստուածածին եկեղեցու ՉԷ (1258) բնագիր-վաւերագրում. «*Թւին :**ՉԷ**: (1258) **յիշխանութեան** ասպուածափառ **տէրանց մերոց Խոշաքին** եւ **աթաբակ Սադունին**, մեք Նորատուաց **մեծ** եւ **փոքր ամէն**, մեր*

կարգը: «Բարձը» գահն էր, իսկ «պատիւ»ը գլխի զարդը (Խ. Սամուէլեան, *Հին հայ իրաւունքի պատմութիւն, հտր, 1*, Արմֆան հրատ., Երեւան, 1936, էջ 213:

[10] Ըստ Ս. Սաղումեանի՝ տէր կոչումը վերջինիս վարչական պաշտօնն է արտայայտում: Անշուշտ, պէտք է կարծել, որ Հուսամը պէտք է աշխարհիկ եւ ոչ հոգեւոր անձ լինի: Գիտնականի հաւաստմամբ, Հուսամը պատմական յայտնի անձ է եւ սերտ կապերի մէջ էր պարոն, իշխանաց իշխան եւ ապա՝ 1270ին հայ եւ վրաց աթաբէկ, ամիրսպասալար Արծրունի Սադուն Բ.ի հետ (Ս. Սաղումեան, *Աշտարակ*, Երեւան, 1998, էջ 41, 196): Ստորեւ կը տեսնենք, որ իշխանը 1270ին աթաբէկ, ամիրսպասալար պատիւները չի ունեցել:

[11] Նոյն:

[12] «*Ես տէր Հուսամ, քաղաքագիւղ Աշտարակոյ ձեռնաւորս*» (նոյն, էջ 41):

[13] Գիտնականի իրաւացի յաւելմամբ՝ բնագրի առաջին տողում պէտք է լինէր վրաց թագաւորի՝ Դաւիթ Ը. (1247-70) անունը, որը բաց է թողնուած ոչ պատահականօրէն: Վերջին շարադրանքը անհասկանալի է (նոյն, էջ 196):

[14] Նոյն, էջ 194: Սաղումեանի ուշագրաւ վկայութեամբ, Հուսամ (Ուսամ) ձեռանաւորը Սադուն Բ. Արծրունու կողմից նշանակուել է Աշտարակ քաղաքագիւղի տէր՝ քաղաքապետ, 1260ականներից մինչեւ 1283-85 (նոյն, էջ 41): Ըստ գիտնականի հետաքրքիր վարկածի կը նշանակի Աշտարակ քաղաքագիւղը 1268ին պատկանել է Մահկանաբերդցի աւատական տանը: Այս հետաքրքիր եւ խիստ կարեւոր պատմական իրողութիւնը հաստատւում է, Աշտարակում Ս. Մարինէ եկեղեցու 1285ի արձանագրութեամբ՝ «*Յիշխանութեան եւ ի տէրութեան պարոն Խութլուբուղաի, ես Աւէտիս, որդի տէր Ուսամին, եւտու յիմում ձեռնաւորութեանս զՎերին առվի ձեռնաղորաջուրն... Ի թվ. ՉԼԴ*»: Խութլուբուղան աթաբէկ, ամիրսպասալար Արծրունի Սադուն Բ.ի որդին է (նոյն, էջ 196, 211):

[15] Նոյն, էջ 22:

սրտի կամաք ***զէզին չար եւ զջ[որիին] եւ վէց****կի վեր կալաք: Ով խափանէ :ՅԺԸ: հայրապետաց նզոված է»*[16]:

Մահկանաբերդցի իշխանի աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսները նշող երկրորդ յուշակոթողը Հաղպատի եկեղեցու փոքր գաւթի հսկայ խաչքարն է, որ կանգնեցրել է վանքի առաջնորդ Յովհաննէս Խաչէնեցին: Յիշատակագրութեան համաձայն՝ վերջինս **ամենափրկիչ գեղեցկատեսիլ** խաչքարը կանգնեցրել է ի պատիւ ժամանակի ամենանշանաւոր իշխան աթաբէկ, ամիրսպասալար Սադունի արեւշատութեան եւ օգնութեան համար՝ **ի իշխանութեան** եւ **տէրութեան** Սուրբ ուխտիս: Կոթողը թուագրւում է **ՉԻԲ** (1273): Այս կապակցութեամբ ուշագրաւ դիտողութիւն է արել վիմագրագէտ Կարօ Ղաֆադարեանը յաւելելով՝ «*Սադունը...միայն Հաղբատավանքի տէրը չէր, այլ նրա հիմնական կալուածքը Մահկանաբերդն էր եւ բարձր պաշտօն ունէր վրաց արքունիքում*»[17]: Գիտնականի հաւաստմամբ՝ այս արձանագրութեամբ ընդգծւում է իշխանի միայն հովանաւոր վերաբերմունքը Հաղպատի վերաբերեալ[18]: Նոյն կոթողի թիկունքին փորագրուած վաւերագրի տեղեկութեամբ, վերոնշեալ Տէր Յովհաննէսը՝ յաւելում է, որ այդ ժամանակ կառուցել է գաւիթը, գրատունը եւ նոր սրահը, նաեւ ինչ-որ փոքրիկ լճակ-ջրամբար, կազմել է տուել Ուրթաձորոյ Ս. Նշանի պահարանը եւ գնել է Բոլա գիւղը՝ նուիրաբելով Հաղբատավանքի Ս. Նշան եկեղեցուն՝ պարոն Սադունի արեւշատութեան համար. «*:**ՉԻԲ**: (1273) Շնորհաւք ՍԲ. Երրորդութեան եւ ողորմութեամբ Սբ. Նշանիս, ես տէր Յովանէս նուասրտ ծառա ծառայից ԱՅ, շինեցի զգաւիթս եւ զգրատունս եւ զսրահս նորին, ածի զպաղատս զլիճն եւ եկու կազմել մեծածախ պահարանս Ուրթաձորո Սբ. Նշանին, գնեցի զգեղն Բալա եւ ընծաեցի ՍԲ Նշանիս՝ վասն արեւշատութե պարոն Սադունին եւ զաւակաց իւրոց եւ Սարգիս վարդապետին եւ ամենայն արդիւնաւորաց: Եւ սահմանեցի ծառզարդարին երից արարացն Բ սպիտակ տաց երէցն*»[19]:

---

[16] *Դիւան հայ վիմագրութեան, պրկ. IV*, կազմ. Ս.Գ. Բարխուդարեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1973, էջ 13: Ստորեւ կ'անդրադառնանք այդ բնագրին: Աւագեանի վերծանութիւնը մի փոքր տարբերւում է նախորդից, որը եւ նշում ենք. «*ՉԷ... տէրանց մերոց Խոշաքին եւ աթաբակ Սադունին մեք՝ Նորատւաց մեծ եւ փոքր ամէն մեր սրըտի կամաք զէզին չար եւ զջեւէլկի վեր կալաք*», Ս. Ա. Աւագեան, *Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1978, էջ 279: Նորադուսի ՉԷ (1258) բնագրի եւ նրա թուականի մասին աւելի մանրամասն տես՝ Ռ. Գասպարեան, «Քարաշամբի Ս. Գէորգ եկեղեցին եւ նրա արձանագրութիւնը», *Էջմիածին*, Թ:2022, էջ 84-86:

[17] Կարօ Ղաֆադարեան, *Հաղբատ*, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1963, էջ 49:

[18] Նոյն:

[19] Նոյն, էջ 213: Մի փոքր անհասկանալի է բնագրի սահմանման վերջին բառակապակցութիւնը «*սահմանեցի ծառզարդարին երից արարացն Բ սպիտակ տաց ե-*

Աթաբակ պատուով իշխանը յիշատակւում է նաեւ Իջեւանի տարածաշրջանի Առաքելոց վանքի Տամուրքի գիւղատեղիի, փոքրիկ եկեղեցու մօտ ընկած խաչքարի ուշագրաւ բնագրում. «*Ի թվին :ՉԻԲ: (1273) յիշխանութիւն ԱԾասէր աթաբակ պարոն Սադունին*»[20]:

Այդ բարձրագոյն տիտղոսով իշխանը յիշւում է եւս Դեղձուտի վանքում գրուած Տաւնապատճառի յիշատակարանում, որի ստացողն է «*կրտսեր եւ յետին սպասօորս բանին Սարգիս*»[21]. «*..ես յորժամ էին դեգերեալ առ ոտս կենդանի վիմիս Առաքել վարդապետի ի գօառիս Մահկանաբերդո, ի պարոնութեան աթապակ Սադունին... ի թվին Հայոց ՉԻԳ (1274)*»[22]: Նոյն վանքի գլխաւոր եկեղեցու մուտքին կից, հիւսիսային կողմում գտնուող պատուանդանի վրայի թեւաւոր խաչքարի ճակատի բնագիրը յիշատակում է՝ աշխարհակալութեան Աբաղա խանի եւ ամիրսպասալար, աթաբէկ Սադունի իշխանութեան ժամանակ՝ Կիլիկիայից եկած Առաքելը կառուցել է (**շինեցաք**) եկեղեցին, գաւիթը, կանգնեցրել Ս. Նշանս Աստուածընկալ՝ ի նեղ ժամանակի դառն աշխատութեամբ՝ Հաղբատի տէր արքեպիսկոպոս Յովանէսի[23] օրօք. «*Յաշխարհակալութեան Աբաղա ղանին եւ յիշխանութե ամիրսպասալար աթաբակ Սադունին, ես Առաքելս նուաստ սպասաւոր բանին ...յերկրէն Կիլիկո եւ գաւառէն Տարսոնի*»[24]:

Իշխանն աթաբէկ տիտղոսով յիշւում է նաեւ Մակարավանքի գլխաւոր եկեղեցու արտաքուստ արեւմտեան պատի 7 տողանոց բնագրում: Վիմագիրն իրազեկում է, որ Դաւիթը՝ Տաշրէլի որդին, կատարել է նուիրատուութիւն վանական հաստատութեանը, շեշտելով իր երախտիքը, որ սնուել եւ մեծացել էր հզօր իշխան Սադունի տանը. «*Ես Դաւիթ, որդի Տաշրելի, սնեալ ի տան մեծ եւ հզաւր իշխանին՝ աթաբակ Սադունին, եւ տու ընծա*»[25]:

Նշեալ պատուանունով իշխանը յիշատակւում է նաեւ Իջեւանի շրջանի Գետաշէն գիւղից մօտ 3 կմ. արեւմուտք գտնուող Առաքելոց վանքի յուշարձանախմբի եկեղեցու բարաւորի բնագրում, ուր քահանայ Գրիգորը յայտնում է, որ կառուցել է եկեղեցին իշխանութեան աթաբէկ Սադունի օ-

---

ոէցն», ովքե՞ր են երից արանցն հոգեւոր անձերը, որ պէտք է 2 սպիտակ տային երէց հոգեւորականներին:

[20] *Դիւան, պրակ, VI*, էջ 218:

[21] *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար*, կազմ.՝ Ա. Մաթեւոսեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1984, էջ 496:

[22] Նոյն:

[23] Հաւանական է «արքեպիսկոպոս Հաղբատա տր Յովանեսն» Յովանէս Արմանեցին է՝ *Դիւան, պրակ, VI*, էջ 82, 112:

[24] Նոյն, էջ 112:

[25] Նոյն, էջ 165: Աւագեանի մեկնաբանութեամբ՝ այս արձանագրութիւնը միակն է վանական համալիրում, որտեղ յիշատակուած է Սադունի անունը, այն էլ՝ անուղղակի: Ուստի գիտնականը ենթադրում է, որ Մակարավանքը չի հովանաւորուել Սադուն Բ.ի կողմից (նոյն, էջ 166):

որք. «*Ի թվին :ՉԻԵ (1276) եւ յիշխանութե աթապակ Սադունին, ես Գրիգոր քահանա շինեցի զեկեղեցիս*»[26]:

Բարձրագոյն այդ տիտղոսով իշխանը յիշատակւում է նաեւ Նոյեմբերեանի տարածաշրջանի Ջուխտագեղցի մատուռի թեւաւոր խաչի բնագրում. «*Թվին :**ՉԻԵ** (1276) յիշխանութե աթապակ Սադունին, ես Հասան, թոռն Ակնհակաղնեցի*»[27]:

Սադուն Բ.ի բարձրագոյն նշեալ տիտղոսները յիշատակւում են նաեւ Այրարատեան աշխարհում, մասնաւորապէս Վանստանի վանական միաբանութեան յիշատակագրերում: Եկեղեցու յիշատակագրերից առաջինի համաձայն՝ Սադուն Բ.ը յայտնում է, որ Վանստանի Աստուածածին վանքին, «*Ի թվին :**ՉԻԵ**: (1278)*» երկու ջրաղացատեղի է նուիրել՝ երկու առուով ու մարգով՝ ինչը, հաւանական է, նախկինում տրուած է եղել ոմն Հոդորսինին. «*Ես աթապակ եւ ամիրսպասալար Սադունս տվի :Բ: ջաղացատեղ յերիցաքաշին :Բ: առուով եւ մարգն, զոր ես Հոդորսին էի տուել. Հաւորսին, որ երբ անի **ԱԾածնին էրեկ:** Ի թվին :**ՉԻԵ**: (1278) յառաջնութեան Գրիգոր վարդապետիս*»[28]:

Եկեղեցու երկրորդ ուշագրաւ բնագրից տեղեկանում ենք, որ Գրիգոր վարդապետը, աթաբէկ, ամիրսպասալար Սադունի իշխանութեան օրօք եղել է առաջնորդ Խոր Վիրապի եւ Վանստանի: Վերջինս 1283ին սալարկել է Վանստանի Աստուածածին եկեղեցին, ինչը նախկինում՝ «*բնէ չէր սալած*», կատարելով բաւականին մեծաքանակ նուիրատուութիւններ, այդ իսկ պատճառով՝ վանքի սպասաւորները պարտաւորուել են տարուայ մէջ մատուցել 8 պատարագ Յայտնութեան տօնին, որից երկուսը վանահօր համար. «*Յիշխանութեան տանս հայոց եւ վրաց աթապակ եւ ամիրսպասալար Սադունին, շնորհիւն ԱՅ, ես Գրիգոր վարդապետ, առաջնորդ Վիրապին եւ սուրբ ուխտիս Վանըստանայ սալեցի զեկեղեցիս, որ բնէ չէր սալած. Արարի այլ արդիւնս ընծայից եւ սպասաւորք խոստացան ի տարին :**Ը**: աւր պատարագ, :**Բ**: ինձ, :**Բ**: տէր Վարդանա, :**Բ**: Թամզկանն, ի թվիս :ՉԼԲ: (1283) ի տաւնի յայտնութեան*»[29]:

Հնավայրի եկղեցու շինաքարի մի բեկորի վրայ փորագրուած է նաեւ «սպասալար» եզրոյթը, որ ակներեւաբար, պէտք է վերաբերուի Մահկանաբերդցի իշխանի տիտղոսաշարին: Եկեղեցու մերձակայքում մի այլ շի-

---

[26] Նոյն, էջ 209:

[27] *Դիւան հայ վիմագրութեան, պրակ, IX*, կազմ.՝ Ս. Բարխուդարեան, Կ. Ղաֆադարեան, Ս. Սաղումեան, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2012, էջ 485: Զարմանալի է, որ բնագրում զանց է առնուած Մահկանաբերդցու «ամիրսպասալար» պատիւը, գուցէ նաեւ՝ Հասանի Ակնեցի (Վերին Խաչեն, Հաթերք=Արցախ) պապի անունը:

[28] Աշխարհբեկ Քալանթար, *Հայաստան քարէ դարից միջնադար*, Երեւան, 2007, էջ 60:

[29] Նոյն:

նաքարի բեկորի վրայ փորագրուած է առանձին նախադասութեան սկզբնամասի հատուած՝ «*ամիրսպասալար, աթաբէկութեան Սադունի*»[30]:

Հայագէտ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի մի յիշատակութեան համաձայն՝ Աղջոց Ս. Ստեփանոս վանքի մի բնագրում յիշատակուող **Խարասլանը**, նոյնը պէտք է լինի - իրաւացի հաւաստմամբ - մի այլ վիմագրում յիշուող Արծրունի Սադուն Բ.ի քարտուղար **Ղարասլան**ի հետ, որը միաբանելով սուրբ ուխտին նուիրաբերել է 20 դահեկան. «*Յառաջնորդութե Գր(իգոր - Ռ.Գ.) վ(ար)դ(ապետՌԳ..)ին, ես՝ Ղարասլան, քարտուղար **աթաբակ Սադունին** միաբանեցա սբ ուխտիս եւ էտու :ի: դիկ*»[31]: Նոյն վանքի մի այլ արձանագրութիւնում հայագէտը նկատում է, որ փորագրող գրչի կողմից նկատուող թերութիւնը պէտք է յաւելագրուէր Մահկանաբերդցի իշխանի անունով: Հայագէտի իրաւացի դիտարկմամբ բնագիրը փորագրուել է որոշակի շարահիւսական անհարթութեամբ: Հաւանական է, ըստ բնագրի՝ Մահկանաբերդցին վանական կալուածքի ոռոգման համար անխափան ջուր է նուիրել. «*Յաշխարհակալութիւն Արղուն ղանին եւ ի թագաւորութե Դաւթի եւ հայրապետութե տր Յովանիսի եւ ի տէրութե տեղոյս պարոն Աշոտոյ, ես Ղազար Աձատուր տէր Աւագս բէրաք զջուրս եւ կանկնեցաք զխաչս եւ տնկէցաք զայգին Յովայն զոր ամիր սպասալար (հաւանաբար, խօսքը Սադունի մասին է – Ռ.Գ.) նուվէր եւ էկեղեցոյ զջուրս անխափան ի բան պահէ կապարողք գրէլոցս աւրհնին յԱյ եւ ով որ զայգին եկեղեցոյս եւ ի ջրէս հանէ յէրից ժողովոյ նզովել եղիցի*»[32]:

Վիմագրերում նկատելի է նաեւ ուշագրաւ մի իրողութիւն. անգամ 1273, 1279 եւ 1280ին բնագիր-վաւերագրերում Մահկանաբերդցի իշխանը յիշատակւում է առանց տիտղոս-եզրոյթի: Այն արձանագրւում է Դեբէդ գետի ափին կանգնեցուած խաչքարի, Հաղպատի փոքր գաւթի 1280 եւ Աթոռիկ գիւղատեղիի խաչքարի վաւերագրերում. «*Կամաւն ԱՅ, **յիշխանութեան պարոն Սադունին**, ի տրութեան Տր Ովանիսի, ես Յոհանէս քահանա եւ եղբարք իմ Յունան, Դաւիթ, Մխիթար կանգնեցաք զխաչս եւ զկարմուջս ի հիմնաց, զիմ գնած էգին եւ զարտն իմ խաչիս հէրենիք գվի: ՉԻԲ: (1273)*», «*Կամաւն ԱՅ, **ի տէրութեանն պարոն Սադունին** եւ ի հայրապետութեան Տր Յովանիսի անյախթ գիտնականի: ...Թվիս **ՉԻԸ** (1279)*», «*Ի թվիս **ՉԻԹ***

---

[30] Նոյն, էջ 63, 64:

[31] «Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի, ի մասին Տ. Գարեգին Արքեպս. Յովսէփեանի, 'Հոգեւոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը' ուսումնասիրութեան», *Սիոն*, Ժ:1936: Յովսէփեանը խնդրոյ առարկայ բնագրի մասին գրում է՝ «*Ղարասլանի արձանագրութիւնը պէտք է դնել 1279-1284 թթ.*»:

[32] Նոյն, էջ 405: Զարմանալի է, որ բնագիրը փաստում է՝ «ի տէրութեան տեղոյս պարոն Աշոտոյ», այսինքն, տեղի իշխանատէրը Աշոտն է, բայց վանական համալիրին «զջուրս անխափան» նուիրել է Սադուն Բ.ը: Ամենայն հաւանականութեամբ (ամիր)սպասալար Սադունը գերիշխան է եւ ուշագրաւ է իշխանի աթաբէկութիւնը շեշտուած է վրաց Դաւիթ Վահրամուլի օրօք:

(1280) ***յիշխանութեան տեղոյս Սադունին****, ես Պածած, որդի Լիպարտի եւ ամուսին իմ Դուդա, յազգէն Մամիկոնենց»*[33]: Այս բնագրիր-վաւերագրերն, ինչպէս նկատում ենք, արձանագրում են, որ Մահկանաբերդցի իշխանը 1273ին արդէն յիշատակւում է որպէս երկրի աթաբէկ, ամիրսպասալար: Հետեւաբար կարելի է հետեւեցնել, որ իշխանն այդ ժամանակաշրջանում դարձել էր «Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալարը:

«Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսով Աբուլէթի որդի Իւանէն յիշատակւում է պատմական Կողբափոր գաւառի կենտրոն՝ Կողբ կամ Կողբաքար աւանի Բարանա-Կողբ[34] հնավայրի վրացերէն արձանագրութեան մէջ: Բնագիրը հաստատում է, թէ իշխան Իւանէ Աբուլէթը պատմական Դմանիս աւանում, չորս ամսում կառուցել է բերդ-ամրոց՝ Դիմիտրէ (Դեմետրէ) Բ. Անձնուրացի թագաւորութեան օրօք. «*Ես՝ Իւանէ Աբուլէթի որդիս՝ աթաբէկս եւ ամիրսպասալարս, Դմանիսը վերցրի եւ բերդ կառուցեցի եւ կիրը հետս բերի: Այս երկիրը երկար ժամանակ աւեր ու ահարկու էր. չորս ամսում սոյն բերդը կառուցեցի՝ Դիմիտրէ արքայի թագաւորութեան օրօք*»[35]: Վաւերագիր-յիշատակագրութիւնն անթուակիր է եւ Պարոյր Մուրադեանի հաւաստմամբ՝ վրացերէն յիշատակագիրը փորագրուել է «*1272 թ. կամ ամենաուշը՝ մինչեւ 1273 թ. կէսերը՝ Դիմիտրէի թագաւորութիւն ստանալու եւ Սադունի՝ աթաբէկ եւ ամիրսպասալար դառնալու ընթացքում*»[36]: Գիտնականի մեկնաբանութեամբ՝ Իւանէ Աբուլէթն աթաբէկ, ամիրսպասալար պատիւին կարող էր արժանանալ Զաքարիա Շահնշահեանի եւ նրա հօր՝ Շահնշահի մահից՝ (1261) յետոյ[37]:

Չհակառակուելով գիտնականին, նկատենք, որ ըստ *Վրաց ժամանակագրութեան* եւ *Քարթլիս ցխովրեբա* ռուսերէն լիակատար երկի, 1261/62/63ին վրացական զօրաբանակի ռազմական հրամանատարը՝ [**ամիր**] **սպասալարը Սարգիս** Ջաղել-Ցիխիսջվարելին է եւ ոչ թէ Իւանէ Աբուլէթը. «*Կանչեց [թագաւոր* ***Դաւիթը****] (Դաւիթ Ե/Է,) հայոց աղբիւրներում Վահրամուլ - Ռ.Գ.*[38]*) Սարգիս Ջաղել-Ցիխիսջվարելուն, որ Սամցխէի* ***սպասալարի*** *պատիւ ունէր, եւ խանի դէմ ըմբոստանալ համոզեց*»[39], «*Դաւիթ թագաւորը կանչեց մեսխերին, շաւշ-կղարջեցիներին եւ իրեն հաւատարիմ ... ով կար.*

---

[33] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 197. նաեւ՝ *Դիւան, պրակ, IX*, էջ 184, 243, 244:

[34] Նոյեմբերեանի շրջկենտրոնից ոչ-հեռու, Բարանա տեղանքում (Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977, էջ 223):

[35] Նոյն, էջ 229:

[36] Նոյն, էջ 231:

[37] «*Պարզ է, որ Իւանէ Աբուլէթի որդին աթաբէկ եւ ամիրսպասալար կարող էր դառնալ Զաքարիայի եւ նրա հօր՝ Շահնշահի մահից՝ յետոյ 1261...*» (նոյն, էջ 232):

[38] Միքայէլ Չամչեան, *Հայոց պատմութիւն, հ*, Գ, ԵՊՀ հրատ., Երեւան, 1984, էջ 223:

[39] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 111:

ժողովեց սակաւաթիւ մարդիկ՝ ութ հազար զինուոր եւ ***զօրապետ*** *նշանակեց* ***Սարգիս Ջաղելուն***»[40], որը մասնակցել է նաեւ Թերէք գետի ճակատամարտին: Նշուած ժամանակում աթաբէկ-գործակալի մասին տարեգիրը ցաւօք տեղեկութիւն չի յայտնում: Բարանա-Կողբ վաւերագրի աթաբէկ, ամիրսպասալար Իւանէ Աբուլէթը, հաւանաբար, շատ կարճ ժամանակով եղել է աթաբէկ, ամիրսպասալար եւ այդ պատիւը միանշանակօրէն նրան շնորհել է՝ բնագրում երկիցս յիշատակուած թագաւոր Դեմետրէ Բ.ը (Անձնուրաց): Ըստ գիտնականի՝ Բարանա-Կողբի բնագիր-յիշատակագիրը չէր կարող փորագրուել 1272ից առաջ, երբ տակաւին պատանի էր Դեմետրէ Բ.ը եւ Տարսայիճ Օրբէլեանը «*...ապա բազում ջանիւ եւ օժանդակութեամբ նստրուցանէ յաթոռն հօր իւրոյ թագաւոր Վրաց ի 721 թուականին*»[41]: Սակայն, ինչպէս կարելի է ենթադրել վրացական սկզբնաղբիւրից՝ վրաց աւագանիներն Դեմետրէ Բ.ին տանելով Հորդա՝ 1270/71/72ին[42], թագաւոր օծելու նպատակով՝ արարողութեան աւարտից յետոյ վերադառնալով Տփղիս, հաւանական է, նորընծայ թագաւորն Իւանէ Աբուլէթին շնորհել է վիլայէթի բարձրագոյն գործավարութեան պատիւները, այլապէս վերջինս, ակներեւաբար, չէր կարող դառնալ երկրի աթաբէկ, ամիրսպասալար: Այս իրողութեան մասին լռում են թէ՛ վրացական, եւ թէ՛ հայկական աղբիւրները: Ենթադրելի է նաեւ, որ Իւանէ Աբուլէթն այդ ընթացքում, «չորս ամսով»[43], ինչպէս յայտնում է Բարանա-Կողբի վրացերէն վիմագիր բնագիրը, եղել է երկրի աթաբէկ, ամիրսպասալար, որից յետոյ 1271/72ին Սադուն Բ.ը գուցէ ուժի զօրեղութեամբ կամ իլխանական արքունիքի միջնորդութեամբ դարձել է վիլայէթի աթաբէկ, ամիրսպասալարը. «*Ողջ թագաւորութիւնը տուեց նրան (Դեմետրէ Բ.ին - Ռ.Գ.), բացի Սարգիս Ջաղելու [երկրից]:* ***Հետը ուղարկեց*** *(խանը՝ Աբաղան - Ռ.Գ.)* ***Սադունին****, որին Դիմիտրէ թագաւորը* ***աթաբէկութիւն պարգեւեց***»[44]:

---

[40] Նոյն, էջ 112:

[41] Ստեփանոս Օրբէլեան, *Պատմութիւն տանն Սիսական*, տպ. Աղանեան, Թիֆլիս, 1910, էջ 425: Արձանագրութեան երեւան գալու ժամանակը որոնելի է 1272-84ին (Պ. Մուրադեան, *Հայաստանի վրացերեն արձանագրութիւնները*, էջ 223):

[42] Н. А. Бердзенишвили, Д. Дондуа, К. Думбадзе, Г. А. Мелишвили, Ш. А. Месхиа, *История Грузии, (После смерти Улу Давида (1272 г.) на престол Восточной Грузии вступил его малолетний сын Димитрий Самопожертвователь* (Ուլու Դաւթի մահից յետոյ (1272) Արեւելեան Վրաստանի թագաւորական գահին նստեց նրա մանկահասակ որդին՝ Դիմիտրի Անձնուրացը), Թբիլիսի, 1962, էջ 410. նաեւ՝ «Դեմետրէ թագաւորէ Վրաց ՉԻԱ (1272)» (*Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ, հտր. I*, կազմ.՝ Վազգէն Յակոբեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, Երեւան, 1951, էջ 42:

[43] Մուրադեան, *Հայաստանի վրացերեն արձանագրութիւնները*, էջ 229:

[44] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 140:

Ինչպէս վերը նկատեցինք Սադուն Բ.ի աթաբէկ, ամիրսպասալար պատիւն առաջին անգամ ընդգծում է Հաղպատի փոքր գաւթի 1273ի երկու վիմագիր աղբիւրներում: Այդ բարձրագոյն տիտղոսներով իշխանը յայտնի է նաեւ նոյն թուականին Գետկայ վանքում՝ գրիչ Մխիթարի կողմից գրուած ժողովածուի յիշատակարանից. «*Յամի Եւթնհարիւրերորդի քսաներորդի երկրորդի (1273) թուականութեանս Հաց... հով[ու]էր...աթոռակալ Լուսաւորչին մերոյ տէր Յակոբ...ի տիեզերականութեան Ապաղա [ղա]նին, եւ յիշխանութեան մերո աշխարհիս, **յաթաբէկութեան Սադունին**, եւ ի տէրութեան տեղոյս Ճարին*»[45]:

Աթաբէկութեան գործավարութեան մասին ուշագրաւ դիտողութիւն է արել Յովսէփեանը: Ըստ նրա՝ աթաբէկը «*Հայաստանի իշխանների գլուխն էր եւ ներկայացուցիչը՝ մոնղոլ խաների եւ վրաց թագաւորի առաջ*»[46]: Իրաւացի է նա, քանի որ աթաբէկ գործավարը ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ «Գիւրջիստանի վիլայէթի» իշխանաւորների գլուխն էր:

Համոզիչ եւ ընդունելի է նաեւ Մուրադեանի ուշագրաւ եզրայանգումը, թէ թէեւ աթաբէկութեան պատիւը շնորհւում էր արտաքուստ վրաց թագաւորի կամքով, սակայն իրականում, կատարւում էր մոնղոլների համաձայնութեամբ կամ նրանց թելադրանքով[47]: Այս իրողութիւնը հաստատապէս աղերսւում է պատմիչ Ստեփանոս Օրբէլեանի վկայութիւնից, երբ վրաց թագաւոր Դեմետրէ Բ.ը, Հորդայից վերադառնալով, հաւանաբար 1284/85ին աթաբէկութեան պատիւ է շնորհում Տարսայիճ Օրբէլեանին[48]՝ պատմիչի հօրեղբօրը. «*Ապա դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդութեամբ եւ ամենայն ազատօք, եւ մեծամեծք Վրաց եւ Հայոց ընդ նմա: Եւ եկեալ ի Շարուր՝ գնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով եւ արքունա-*

---

[45] *Հայերէն ձեռագիր յիշատակարաններ ԺԳ.*, էջ 435:

[46] Գ. Յովսէփեան, «Մոմիկ սարկաւագ», *Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հտր. Բ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 221: Ա. Աբրահամեանը նկատում է, որ Աթաբէկ թուրքական փոխառութիւնը հայերէնում հանդէս է եկել նախ որպէս հասարակ, ապա՝ նաեւ յատուկ անուն: Նրա հաւաստմամբ՝ բառի ստուգաբանական իմաստն է «բէկի հայր», «թագաւորի հայր», մեզանում կիրառական է եղել «փոխարքայ», սելջուկեան եւ մոնղոլ-թաթարական տիրապետութեան շրջաններից՝ «անկախ իշխան» իմաստներով (Ա.Ա. Աբրահամեան, «Բնագիտական դիտարկումներ, Ստեփանոս Օրբէլեանի պատմական երկում», *Պատմաբանասիրական հանդէս*, 3:1985, էջ 64: Անկախ իշխանները, հաւանաբար տէրունի իշխաններն էին՝ Սմբատ Օրբէլեանը, Հասան Ջալալ Դոլան, Սարգիս Ջաղելին, որոնք աթաբէկութեան պատիւ չեն ունեցել:

[47] Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, էջ 233:

[48] Աթաբէկ տիտղոսով Տարսայիճ Օրբէլեանը յիշատակւում է Գնդեվանքի եկեղեցու հետեւեալ բնագրում, որ զարմանալիօրէն թուագրված է 1281. «*Շնորհիւն ԱՅ, եւ ողորմութք պարոն Աթաբակ Տարսայիճիս, ես Աբաս ու այլ եղբարքս, կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութե Մարկոսի եւ Վարդայ, Միրայ թվ :ՉԼ: (1281)*» (*Դիւան հայ, պրակ, III*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1967, էջ 26:

կան ընծայիւք մեծարեաց զթագաւորն: Եւ նա առեալ փարաւ ընդ իւր զնա յերկիրն Աւագեան՝ յԱյրարատ. եւ բազում թախանձանօք բռնազբօսեաց զնա, եւ եդ Աթաբէկ ի վրայ ամենայն տէրութեան իւրոյ մինչեւ ի Տփղիս եւ յԱնի եւ ի Կարս»[49]:

Սակայն զարմանալիօրէն Արծրունի Սադուն Բ.ի անունը եւ նրա գործունէութեան սկիզբը, վրացական աղբիւրի հաւաստմամբ՝ շօշափւում եւ հոլովւում է 1249/50ին, երբ մահացել էր ամիրսպասալար, աթաբէկ Աւագ (Սարգիս) Զաքարեանը, ինչը խիստ առարկելի է: Թէեւ վրացական յիշատակութիւնը ծաւալուն է, սակայն անհրաժեշտութիւն է զգացւում այն նշել ամբողջական, որպէսզի ընդգծուի պատմական առանձին իրողութիւնների առկայութիւնը, որոնք շարադրուել են նկարագրական եղանակով եւ ընդգրկում են քսան եւ աւելի տարիների պատմական իրողութիւններ.

Այնտեղից [Ուլոյի հետ] եկաւ (վրաց թագաւոր Դաւիթը - Ռ.Գ.) [նրա] ամառանոցը[50], որտեղից թագաւորին ուղարկեց Վրաստան (Քարթլի), որ թագաւորը պատրաստ լինի Եգիպտոս արշաւելու, որ է Մսերք: Մտաւ (Դաւիթը - Ռ.Գ.) անցաւ Իւանէ աթաբէկի որդի Աւագ աթաբէկի երկիրը, իսկ այդ ժամանակ վախճանուած էր Աւագը եւ չունէր արու զաւակ, այլ միայն Խուաշագ անունով մի աղջիկ: Թագաւորը արտասուելով գնաց Բջնի: Տեսաւ Աւագի կնոջը՝ Ռաճի Էրիսթաւ Կախաբերիձէների աղջկան, Գուանցա անունով, գեղեցկատես: Սիրահարուեց նրան եւ քիչ անց նրան կնութեան ու թագուհի դարձնելու տարաւ: Բերեց իր թագաւորութիւն: Իսկ Աւագի աղջկան թողեց հայրական տիրոյթում եւ յանձնարարեց նրան Մահկանաբերդցի Սադունին, որ իմաստուն ու խելօք մարդ էր, բարեխոհ, բարետես, ուժով յուժ զօրեղ, նշանաւոր, ընտիր ըմբիշ, վարպետ նետաձիգ[51]:

Վաւերագրի համաձայն՝ Ուլօն[52], Հուլաւեան գերդաստանի հիմնադիր Հուլաւ(գ/ղ)ու իլխանն (1256-1264/5) է, որը վերը նկատեցինք, Անդրկովկաս է եկել հաստատապէս 1256ին եւ իրատեսօրէն որեւէ կապ չէր կարող ունենալ 1249/50ին[53] մահացած Աւագ Զաքարեանի յուղարկաւորման հետ: Երկրորդ՝ Հուլաւուի արշաւանքն Ասորիք, որի մասին ակնարկում է տարե-

---

[49] Օրբէլեան, էջ 426:

[50] Վրաց տարեգիրը նկատի ունի Մուղանի դաշտավայրը, *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 109-10:

[51] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 109-10:

[52] «*Ուլոն նոյն Հուլաւու կամ Հուլագու խանն է*», նոյն, էջ 199:

[53] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութեան Հայոց*, աշխ.՝ Կ. Ա. Մելիք.Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, «*ՈՂԸ (1249) մեռաւ իշխանաց իշխան Աւագ եւ թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ*», էջ 321. նաեւ՝ Օրբէլեան, «*676 թուին էառ զԱթաբէկութիւնն որդին Իւանէի Աւագն, կեցեալ իշխանութեանն ամս 23*», էջ 398:

գիրը, տեղի է ունեցել 1258-60ին, երբ հայկական եւ վրացական աղբիւրների հաւաստմամբ, թագաւոր Ուլու Դաւիթը[54], (վրաց պատմագրութեան համաձայն՝ երկու Դաւիթները)[55] մոնղոլների ծանր հարկերի պատճառով, այդ ժամանակ ապստամբել էին[56], թէեւ տարեգիրը յայտնում է, որ Ուլու Դաւիթը իր զօրաբանակով մասնակցել է Եփրատ գետի մօտ տեղի ունեցած դժուարին ճակատամարտին. «*Դաւիթ թագաւորը իր բանակով քաջաբար նախայարձակ էր լինում*»[57]: Նոյնիսկ, ըստ տարեգրի, վրացական զօրաբանակը մասնակցել է, հաւանաբար, Մուֆարղին-Նփրկերտ ամրոցի գրաւման, թէեւ վերջինս քաղաքի անունը չի նշում. «*Ուզում եմ (խանը - Ռ.Գ.), որպէսզի արշաւենք եւ շրջապատենք այս քաղաքն (հաւանական է Մուֆարղին քաղաք – Ռ.Գ.) ու շների պէս սկսենք հաչել ու կաղկանձել*»[58]:

Յիշատակման յաջորդ տեղեկութիւնը վերաբերում է թագաւոր Դաւթի սիրահարուելուն՝ այրի իշխանուհի Գոնցային եւ վերջիններիս ամուսնութեանը. ակներեւաբար այն տեղի է ունեցել աւելի ուշ՝ 1257/58/59ին:

Վրացական աղբիւրի վերջին տեղեկութեամբ, ամենայն հաւանականութեամբ, ակնարկւում է Մահկանաբերդցի իշխանի՝ Աւագեան աւատական տան հեջուբ-խնամակալ, սենեկապան, վերահսկիչ-կառավարչի (արարողապետ) մասին. «*Իսկ Աւագի աղջկան թողեց*[59] *հայրական տիրոյթում եւ* ***յանձնարարեց նրան*** *Մահկանաբերդցի Սադունին*»[60]:

---

[54] Գանձակեցի, էջ 389-90. նաեւ՝ *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 111:

[55] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 203 (68):

[56] «*Իսկ թագաւորն վրաց Դաւիթ՝ որդի Լաշային, որ կայր ի հնազանդութեան թաթարին, նեղացաւ, ծանծրացաւ ի բազում հարկապահանջութեանցն, որ նեղէին զնա եւ զամենայն իշխանսն, եւ զամենայն աշխարհս անհնարին ծանրութեամբ, զոր ոչ կարային բառնալ: Եթող նա զքաղաք իւր, զՏփխիս, եւ զաթոռ, եւ զամենայն ինչ, զոր ունէր, եւ փախեաւ ի խորին Ափխազք, եւ յամուրսն Սուանեթոյ*» (Գանձակեցի, էջ 389):

[57] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 108:

[58] Նոյն. էջ 109: Մուֆարղին-Նփրկետ ամրոցի գրաւմանը, մասնակել է նաեւ Ելիկում Օրբէլեանը, որը դեղակորուս է եղել Աւագ Զաքարեանի հրամանով. «*Ապա յետ ամաց ինչ գնաց Թաթարն. եւ փարաւ ընդ իւր զօրսն Վրաց եւ զԱւագն եւ զՇահանշահ. ընդ որոց եւ գնաց Ելիկումն ի վերայ քաղաքին Մարփիրոսաց որ Նփրկերտ կոչի... եւ Անդէն հիւանդանայ Ելիկումն խստագոյն ցաւօք, եւ որպէս ասեն, դեղակուր լինի ի բժշկաց ի հրամանէ Աւագին*» (Օրբէլեան, էջ 404): Զաքարեանը 10 տարի առաջ մահացած էր եւ չէր կարող մասնակել արշաւանքին:

[59] Ամիրսպասալար, աթաբէկ Աւագ Զաքարեանի միակ դուստր Խոշաքը (վրաց. Խուաշագ) մանկահասակ չէ: Վերջինիս անունը հոլովւում է 1236ին, երբ մոնղոլները ներխուժել էին Հայաստան. «*Իսկ իշխանն մեծ՝ որդի Իւանէի, որ Աւագն կոչէին...Իսկ նորա կամեցեալ շահել զմիրս նոցա, տայ զդուստր իւր նոցա եւ ինչս բազումս, զի թերեւս թուլասցին ի պաշարմանէն*» (Գանձակեցի, էջ 254-55):

[60] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 110: Այն նկարագրական եղանակով կրկնւում են մի շարք յղումներում եւս, ինչպէս 129 էջի յիշատակութիւնում է «*...[Սադունը] նրա*

Հարց է՝ Մահկանաբերդի իշխանը ե՞րբ կարող էր լինել Աւագեան աւատական տան հեջուբ-խնամակալ, սենեկապան, վերահսկիչ-կառավարիչը:

Մատենագիր եւ վիմագիր սկզբնաղբիւրների վկայութեամբ նկատելի է, որ իշխանապետ Աւագ Զաքարեանի մահուանից յետոյ Հայաստանում ընկերաքաղաքական որոշակի փոփոխութիւններ են տեղի ունեցել: Ժամանակի պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Հայաստանի իշխանավարումն Աւագեան տնից սկզբում անցել է Շահնշահեան տանը, իսկ, այնուհետեւ, որոշ ժամանակ անց, վերստին վերադարձուել է՝ շնորհուելով աթաբէկ Աւագի այրիացած կնոջը՝ **Գոնցա Կախաբերիձէներին**.. «*Եւ տուն զիշխանութիւն նորա Զաքարէի, որդւոյն Շահնշահի, հօրեղբօր որդւոյ Աւագին, զի Աւագն որդի ոչ ունէր, բայց միայն դուստր մի երեխա: ..Եւ ապա հանեալ ի Զաքարէէ եւ տուն կնոջ Աւագին, որում անուն էր Գոնցա*»[61]: Պատմական այդ իրողութիւնը նկատւում է վիմական սկզբնաղբիւրներում եւս, եւ հարկ է ներկայացնել դրանք հաստատող միքանի օրինակով:

Յովհաննավանքի ժամատան **ՈՂԹ** (1250) վիմագիր բնագրում երեւան է գալիս երկրամասի ընկերաքաղաքական որոշակի փոփոխութիւն: Տէրութեան իշխանապետը Շահնշահ Ա Զաքարեանն է. «*Յամի ՈՂԹ* ***ի տէրութեան Շահնշահի****, որդոյ Մեծին Զաքարիահ*»[62]: Պատմական այս իրողութիւնը հաստատում է նաեւ նոյն հնավայրի Կաթողիկէ եկեղեցու անթուակիր վաւերագիրը. «*Անուամբն ԱՅ եւ* ***յիշխանութենն Շահինշահի*** *[մանդատ]որդախուցէսի եւ յառաջնորդութե Սարգսի միայնաւորի*»[63]: Շահնշահ Ա. Զաքարեանի գերակայ իշխանավարումն արձանագրում է նաեւ Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու 1251ին փորագրուած վաւերագիրը, որն իրատեսօրէն հաստատում է վերջինիս իշխանութեան գերակայութիւնը Հայաստանում 1250ականների սկզբին. «*Հայոց Չ (1251) ...յիշխանութեան Մեծին Շահնշահի*»[64]: Պատմական նշեալ ընկերաքաղաքական իրողութիւնը հաստատւում է նաեւ Հաղբատի 1257ի բնագրով, որտեղ Շահնշահ Ա.ի իշխանավարմանը գահակից է նաեւ աւագ որդի՝ Զաքարէն. «*Ի թուիս Հայոց :ՉԶ:* ***Ի տէրութեան*** *մեծին Շահնշահի եւ* ***Զաքարիայի*** *շինեցաւ*»[65]:

Այս իրողութիւններից երկու տարի անց, Նոր Գետիկի (Գօշավանքի) Ս. Աստուածածին եկեղեցու 1260ի ինը տողանոց բնագրով, պարզւում է՝ Ար-

---

կնոջ՝ Աւագի դուստր Խոաշագի սենեկապետն էր [էջիբը]», եւ 140 էջի յիշատակման մէջ՝ «*Ու [Սադունը] սկսեց խնամակալ լինել ..., որովհետեւ [թագաւորը] նրա տէր Աւագ աթաբէկի աղջկա [մասին հոգալ] յանձնարարեց Սադունին, իսկ Խուաշագը էջիբութիւն տուեց նրան*»:

[61] Գանձակեցի, էջ 321:

[62] Ղաֆադարեան, էջ 103:

[63] Նոյն, էջ 96:

[64] Հ. Եղիազարեան, «Բջնիի վանքը եւ Բջնի գիւղի միւս յուշարձանները», *Էջմիածին*, Թ-Ժ:1963, էջ 46:

[65] Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 217:

մանեցին, որ ամբողջ թեմի թեմակալ եպիսկոպոսն էր[66], Գետկայ վանքի վարդապետ, պատմագիր Գանձակեցու խնդրանքով վերացրել է գիւղի՝ եպիսկոպոսական աթոռին տրուող հարկը՝ **Գոնցա** խաթունի **իշխանութեան օրօք**. «*Ասրծով ես տր Յովանէս Արմանեցի ազատ գերցի զԳետկայ ժողովուրդս ի հարկէ, որ տային յաթոռն,* ***յիշխանութե Գոնցա խաթունին****, ի խնդրո Կիրակոս վարդապետին...գրեցաւ :ՉԹ: թիւ*»[67]: Այսինքն, 1260ին երեւան է գալիս պատմական այն ընկերաքաղաքական իրավիճակը, որ Աւագեան երկրամասի իշխանութիւնն **անցել էր Գոնցա խաթունին**: Հաւանական է, այն ժամանակ, երբ վերջինս ամուսնացել էր վրաց թագաւոր Դաւիթ Վահրամուլի հետ: Այս իրողութիւնը, մի փոքր աւելի վաղ, հաստատում է նաեւ *Մանր ժամանակագրութեան* վկայութիւնը. «*Յայսմ ամի մեռանի Աւագն, որդի Իւանէի, անորդի, եւ թողու դուստր մի Խոշաք անուն, եւ սուգ անհնարին պատեաց, զերկիրս մեր, եւ* ***կին նորա Գոնցայն առնէ զտէրութիւն աշխարհիս****, ՌՄԾԱ (1251)*»[68]:

Սակայն, ինչպէս նկատեցինք, Նորատուսի Ս. Աստուածածին եկեղեցու 1258ի բնագիրը նոյնպէս արձանագրում է Աւագեան երկրամասի ընկերաքաղաքական փոփոխութեան մասին: Վաւերագրի հաւաստմամբ, Աւագեան երկրամասի տէրերն են աթաբէկ Աւագի դուստր Խոշաքը եւ աթաբէկ Սադունը (Սադուն Բ.ը – Ռ.Գ.). «*Թւին :ՉԷ: (1258)* ***յիշխանութեան*** *աստուածափառ* ***տէրանց մերոց Խոշաքին*** *եւ* ***աթաբակ Սադունին***»[69]:

Նկատելի է, որ Նորատուսի խնդրոյ առարկայ բնագիրն անուղղակիօրէն խօսում է պատմական խիստ կարեւոր իրողութեան մասին, ինչը ցանկալի է մեկնաբանել:

Նորատուսի վաւերագրում, Արծրունի Սադուն Բ.ը հանդէս է գալիս աթաբէկ պատուով: Այդ առիթով Ս. Աւագեանը յայտնում է, որ Մահկանաբերդցի իշխանաց իշխան Արծրունի Սադուն Բ.ն աթաբէկութեան պատիւը ստացել է **ստուգապէս 1270ին** վրաց թագաւորի կողմից[70]:

---

[66] «*Յովհանէս Արմանեցին, որ եւ Հաղարծնին էր առաջնորդ, եւ ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեօթնհարիւր հինգ թուականին: Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երեւելի՝ սրբատաշ վիմօք, եւ ապա գնաց ի մեծ աթոռն Հաղբատ*» (Գանձակեցի, էջ 223):

[67] Նոյն:

[68] *Մանր ժամանակագրութիւններ*, էջ 42: Ինչպէս երեւում է իշխանուհի Գոնցան ամուսնու մահից երկու տարի յետոյ դարձել է երկրամասի իշխանապետը:

[69] *Դիւան, պրկ. IV*, էջ 13: Աւագեանի վերծանութիւնը մի փոքր տարբերւում է նախորդից. «*ՉԷ... տէրանց մերոց Խոշաքին եւ աթաբակ Սադունին մեք՝ Նորատուաց մեծ եւ փոքր ամէն մեր սրբոյ կամաք զէգին չար եւ զջեւէլկի վեր կալաք*» (Աւագեան, էջ 279: Սակայն ՉԷ տարեթիւ չի համապատասխանում Խոշաքի եւ աթաբէկ Սադունի տիրապետութեան ժամանակներին:

[70] Աւագեան, *Վիմական արձանագրութիւնների*, էջ 279: Այդ կարծիքը գիտնականը կրկնում է քանիցս՝ *Դիւան, VI պրակ.*, էջ 166:

Չհակադրուելով գիտնականին՝ նկատենք, որ 1270ին Զագավանքում տեղի ունեցած եկեղեցական յայտնի ժողովի յիշատակարանի համաձայն, այն գումարուել է «*ի թուիս հայոց* ***ՉԺԹ*** *(1270)*», **արաց ամսի**[71] ԺԵ կամ ԺԷ, «*ի տաւնի սրբոյն Գրիգորի, յաշխարհակալութեան Ապաղա ղանին (1265-1282), կամաւք եւ հրամանաւ Խոշաքին*[72]*, եւ իշխանաց մերոց մեծին Պռաւշայ եւ Սադոնին եւ Սմբատայ*»[73]: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ ժողովի գումարման ժամանակ, ակներեւաբար, իշխան **Սադունը** չի ունեցել աթաբէկ, ամիրսպասալար պատիւները, ուստի յիշատակագրի իրազեկմամբ՝ վերջինս իշխանական դիրքով, որոշակի աստիճանական տարբերութեամբ, հաւանական է զիջել է «**մեծին** Պռաւշայ»՝ Խաղբակեան իշխանին[74]: Այսինքն, իշխանը 1270ին «Գիւրջիստանի վիլայէթում» բարձր դիրք չէր զբաղեցնում: Բնականաբար, եթէ իշխանն ունենար գործակալական այդ բարձր տիտղոսները, ապա վաւերագրում անվերապահօրէն կը նշուէր: Վերջինս այդ պատիւներին կարող էր արժանանալ, ամենայն հաւանականութեամբ, Բարանա-Կողբ վաւերագրում աթաբէկ, ամիրսպասալար տիտղոսներով հանդէս եկած Իւանէ Աբուլեթից յետոյ՝ 1271/72ին: Չպէտք է մոռանալ նաեւ, որ 1270ին մահանում է Գէորգի Լաշայի որդի թագաւոր Դաւիթ Վահրամուլը, որից յետոյ, ինչպէս վրաց տա-

---

[71] Արաց ամիսն ըստ Հ. Բադալեանի հաւաստմամբ՝ Յովհաննէս Վանական Իմաստասէրի մօտ հանդիպում է «արանց տառադարձութեամբ» եւ ստուգաբանւում է. «*Եւ Արանց ի յանել ձեան զլերինս եւ զբլուրս, ասեն արանց է այս ճանապարհ եւ ոչ կանանց. Արի մարդոց է այս եւ ոչ թուլից եւ վատաց*»: Գիտնականի յաւելմամբ՝ «*Յովհաննէս Իմաստասէրը իր* Պատճէն տոմարի *աշխատութիւնում արաց ամիսը նոյնպէս գործ է ածում արանց ձեւով. «Ձմեռնամուտ այսպէս. Կալ ԺԱ (11) եւ զնահանջն տուր արանց ամսոյ*»: Արացը տեւում է Յունուարի 8ից մինչեւ Փետրուարի 6ը: (Հ. Ս. Բադալեան, *Օրացոյցի պատմութիւն*, Արմֆան, Երեւան, 1940, էջ 97, 98): Աւելի մանրամասն տե՛ս՝ Լ. Խաչիկեան, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», *Մատենադարանի գիտական նիւթերի ժողովածու*, 1:1941, էջ 160. նաեւ՝ Ա. Աբրահամեան, *Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը*, Պետական համալսարան, Երեւան 1956, էջ 206:

[72] Ամիրսպասալար, աթաբէկ Աւագ (Սարգիս) Զաքարեանի միակ ժառանգդուստրը:

[73] Գարեգին վարդապետ, «Զագավանից ժողովը», *Շողակաթ*, 1913, էջ 22: Նշեալ ժողովի մասին վկայում է նաեւ Մխիթար Այրիվանեցին. «*Ի Ղանութեան Ապաղային եւ ի կաթողիկոսութեան տեառն Յակոբայ արարին ժողով ի Հաղբատ եւ ի Զագաւանս*» (Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն հայոց*, կազմ.՝ Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1860, էջ 68):

[74] Թէեւ նկատելի է, որ «Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցւոյ. հեղ.՝ Վարդան Արեւելցի, վայր՝ Խոր Վիրապ» յիշատակարանում Պռոշ Խաղբակեանի անունը Վարդան Արեւելցին նշում է վերջում. «*...ողորմութիւն եւ թողութիւն մեղաց, եւ ամենայն երախտաւոր պատրոնացն Սադունին, Սմբատա, Քրդին, Պռաւշայ*» (*Հայերէն ձեռագիր յիշատակարաններ ԺԳ. դար*, էջ 356, 366):

րեգիրն է նշում. «*Ապա հաւաքուեցին Վրաստանի բոլոր դիդեբուլներն ու արքայազն Դիմիտրէին տարան Հորդա*»[75]: Ասել է, թէ թագաւոր Դաւթի մահուանից յետոյ, մի որոշ ժամանակ անց, վրաց արքունիքի աւագանիները, բնականաբար, նոր մեկնել են Հորդա՝ արքայազն Դեմետրէին թագադրելու նպատակով: Եթէ ընդունելի համարենք այն պարագան, որ 1270ի վերջին Դեմետրէ Բ.ը թագաւոր օծուելով՝ աթաբէկ եւ ամիրսպասալար պատիւները շնորհել է Աբուլէթի որդի Իւանէին, ապա պէտք է ենթադրել, որ որոշ ժամանակ՝ մէկ կամ երկու տարի յետոյ, վերջինիցս միանշանակօրէն այդ գործաւարութիւններն անցել են Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ.ին: Այսպիսով, 1271/72ին Արծրունի Սադուն Բ.ը որոշապէս դարձել է «Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալար:

Ե՞ՐԲ ԵՒ Ո՞Ր ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՈՂ ԷՐ ԻՇԽԱՆՈՒՀԻ ԽՈՇԱՔԸ ԼԻՆԷՐ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՏԷՐ-ԻՇԽԱՆԱՒՈՐԸ

Այժմ հարկ է պարզել խնդրոյ առարկայ վաւերագրի խիստ կարեւոր հետեւեալ իրողութիւնը. ե՞րբ եւ ո՞ր ժամանակ կարող էր իշխանուհի Խոշաքը լինել հայրական երկրամասի տէր-իշխանաւորը, քանի որ Գօշավանքի վերոնշեալ 1260ի բնագրի համաձայն՝ երկրամասի իշխանատէրը մայրն էր՝ Գոնցա խաթունը:

Յայտնի է, որ 1258-60ին Վրաստանում, հայկական եւ վրացական աղբիւրների վկայութեամբ՝ մոնղոլների ծանր հարկերի պատճառով, ապստամբութիւն է բռնկւում: Գանձակեցու վկայութեամբ, վրաց թագաւոր Դաւիթը տագնապով թողնում է Տփխիսը, թագուհի Գոնցային եւ նորածին որդուն՝ Դեմետրէին, տանելով իր հետ միայն Գէորգի[76] անունով աւագ տղային՝ պատսպարուելով հեռաւոր խորին Ափխազք՝ ամուր Սուանէթում[77]: Ապստամբութեան մասին իլխան Հուլաւուն տեղեկանալով՝ պատժիչ զօրաբանակ է ուղարկում Արղուն ոստիկանի (Արղուն Օյրիդին[78]) հրամանատարութեամբ, որն ըստ վրացական աղբիւրի, բաւականին մեծաքանակ էր՝ քսան հազար. «*Եկաւ Արղունը քսան հազար զօրքով, կտրեց անցաւ Գանձակը ու Սոմխիթը եւ հասաւ Թփղիս*»[79]: Ինչպէս հայկական, այնպէս էլ վրացական աղբիւրները շեշտում են, որ Արղունին չի յաջողուել գերել վրաց թագաւորին, սակայն սաստկապէս աւերել է վրաց թագաւորների Գելաթ գերեզմանոցը եւ Աձղորի կաթողիկոսարանը[80], շրջակայ երկրամասերը: Սակայն սակաւաթիւ հեծեալ ժողովրդական ուժեր, յանկարծակի

---

[75] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 140:

[76] Օս Ալթունից ծնուած, *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 109:

[77] Գանձակեցի, էջ 389. նաեւ՝ *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 111:

[78] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 112:

[79] Նոյն:

[80] Գանձակեցի, էջ 390:

գրոհել են Արղունի հրոսակների վրայ՝ նշանակալից կորուստների մատնելով, որի պատճառով Արղունը վարանել է այլեւս «**համարձակ մտանել խուզել զվայրսն**»[81]: Արդիւնքում Արղունն իվերջոյ գերեվարել է թագուհի Գոնցային, նրա դուստր Խոշաքին, նորածին որդուն՝ Դեմետրէին, Շահնշահ Ա. Զաքարեանին եւ Արցախի տիրակալ Հասան Ջալալ Դոլային[82]: Թագուհի Գոնցան եւ Հասան Ջալալ Դոլան իրենց մահկանացուն են կնքում Հորդայում, իսկ միւսները՝ «*...յորոց բազում գանձս առեալ, հազիւ զերծան ի մահուանէ*»[83]: Հետեւաբար, Խոշաք Զաքարեանը հայրական կալուածքի օրինական տէր միայն կարող էր լինել մոնղոլական գերութիւնից վերադառնալուց յետոյ, ակներեւաբար, 1264/65ին, կամ մի փոքր աւելի շուտ (յայտնի չէ, թէ իշխանուհին երբ է վերադարձել գերութիւնից)[84]:

Համաձայն *Մանր ժամանակագրութեան* վկայութեան, իշխանուհի Խոշաքը 1269ին ամուսնացել է իլխանութեան առաջին վեզիր, պարսիկ խոջա Շամս ադ Դին Մուհամմէդ Ջուվէյնու հետ. «*Սահիպն զԽոշաքն էառ ՉԺԸ (1269) թվին*»[85]: Վերջինս իլխանութեան մէջ իր վարած պաշտօնի անունով կոչւում էր Սահիբ Դիւան[86]: Այդ պաշտօնին նա նշանակուել էր իլխան

---

[81] Նոյն:

[82] Նոյն:

[83] Նոյն:

[84] Թէեւ Գանձակեցին Զաքարէ Շահնշահեանի մահը տարեթուով չի նշում, սակայն հայրը՝ Շահնշահ Ա.ը, որ արդէն գերութիւնից պէտք է վերադարձած լինէր՝ լսելով որդու մահուան «*զգոյժն հայր նորա Շահնշահ ի գիւղն Օձուն... ի տրտմութենէն մեռաւ*» (նոյն, էջ 393): Ակներեւաբար, Շահնշահ Ա.ի վերադարձը կապւում է աղերսուելով Մրենի 1261ի գիւղաքաղաքի վաճառման հետ (И. А.Орбели, "Надписи Мрена," *Հայագիտական հետազօտութիւններ, պրակ, Ա*, Երեւան, 1974, էջ 41): Հաւանական է նաեւ Խոշաքի վերադարձն առնչւում է Երեւանի «հողով ջրով» 1264ի բնագրի վաճառքի հետ (Կ. Ղաֆադարեան, *Երեւան. միջնադարեան յուշարձաններ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1975, էջ 137): Սակայն Սիւնեաց պատմիչը հօրեղբօր որդու մահը Թերեգ գետի ճակատամարտում նշում է 1261ին. «*Իսկ եղբօրորդին սոցա Բուրթէլն գնաց ընդ զօրս Հուլաւոյին ի պատերազմի ընդ Բերքայ ղանին ի դաշտն Խազրաց որ այժմ Խփչախք կոչին, եւ առ մեծ գետովն զոր Թերգ (Տէրեկ) կոչեն, սպանանի ի պատերազմին յ710 թուին (1261)*» (Օրբէլեան, էջ 416): Ակադ. Յակոբ Մանանդեանը Թ(Տ)երեկ գետի ճակատամարտը նշում է 1263 Յունուարին (Յ. Մանանդեան, *Երկեր*, Գ, Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1977, էջ 252): Անշուշտ նկատելի է պատմական ինչ-որ հակասութիւն նշեալ յիշատակութիւններում, բայց իվերջոյ իշխանուհի Խոշաքը պէտք է գերութիւնից վերադարձած լինի 1260ականների սկզբում, ոչ ուշ քան՝ 1262-64/65ը, թէեւ մատենավիմագիր ոչ մի յիշատակութիւն չկայ:

[85] *Մանր ժամանակագրութիւններ*, էջ 44:

[86] Рашид ад-Дин, *Сборник летописей т. III*, Մոսկուա-Լենինկրատ, 1946 էջ 61. նաեւ՝ Մանանդեան, էջ 277): «Սահիբ Դիւան» (պահլ. devan, պարսկ. divan) Արքունի ատեան, դահլիճ, դիւանատուն (Ստ. Մալխասեան, *Հայերէն բացատրական բառարան, հտր. Ա*, Հայկ. ՍՍՌ պետական հրատ., Երեւան, 1944, էջ 525):

Հուլաւուի կողմից 1262ին[87], եւ այդ բարձր դիրքում է եղել նաեւ Աբաղայի (1265-82), Թագուդար-Ահմադ (1282-84) իլխանների օրոք:

Վերը նկատեցինք, որ 1270ին Ձագավանքում գումարուած եկեղեցական ժողովը ղեկավարել էր Խոշաք Զաքարեանը: Սակայն վրացական աղբիւրի յիշատակմամբ, վերջինս ամուսնու՝ Սահիբ Դիւանի հետ, ակներեւաբար, 1271 կամ 1272ին մեկնել է Թփխիս, որտեղ ամուսնուն «թագաւորները պարգեւել», շնորհում են Կարս քաղաքը: Պէտք է նկատել, որ վրաց անանուն տարեգիրը չի նշում անշարժ գոյքի շնորհման ընկերաքաղաքական խիստ կարեւոր շարժառիթը. «*Եւ Աւագ աթաբէկի մեծ սահիբդիւանը, որ [Աւագի] աղջկան՝ Խոաշագին ի կնութեան բերեց... Եւ [սահիբդիւանը] գնեց բազմաթիւ երկրներ, իսկ թագաւորները պարգեւեցին Կարսը, նստեց Կարսում եւ զաւթեց շրջակայ երկրները ախալցիխեցիներից: Իսկ Ախալցիխեցու աղջկան կնութեան բերեց*»[88]: Այսպիսով, վրացական աղբիւրի անուղղակի վկայութեամբ, նկատելի է, որ Խոշաք Զաքարեանը 1271/72ի դուրս է եկել իր հայրական կալուածքից, եւ մինչեւ ամուսնու կառափնելը՝ 1284 Հոկտեմբեր, ապրել է Հորդայում կամ Պարսկաստանում[89]: Ուստի, ինչպէս իրաւացիօրէն նկատել է Հայկազ Ժամկոչեանը[90], Աւագեան աւատական կալուածքի ղեկավարումը յանձնուել է հեջուբ, խնամակալ-կառավարիչների: Ամենայն հաւանականութեամբ, այդ տարիներից սկսած Մահկանաբերդցի իշխանն եղել է Աւագեան աւատական տան հեջուբ-արարողապետ-սենեկապանը մինչեւ իր կեանքի վերջը՝ 1284[91]: Վրաց տարեգրի հետեւեալ արտայայտութիւնը, ուր ասւում է, թէ «*Այս սահիբդիւանը հզօրացել էր Ուլո խանի կողմից, եւ Սադունն էլ՝ նրանից*»[92], մեր կարծիքով այդ տեղեկութիւնը պէտք է վերաբերի Մահկանաբերդցի իշխանի գործունէութեան այն ժամանակաշրջանին, երբ վերջինս 1271/72ին դարձել էր Աւագեան տան հեջուբ-կառավարիչը, ինչը նախադրեալ է հանդիսացել իշխանի հարստացմանը:

«Դիւան» դահլիճ, ատեան, «մատենադարան», «դիւանապետ, դիւանադպիր» (Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտր. Ա.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1971, էջ 671): «Սահիբ Դիւան» արաբերէնից թարգմանաբար նշանակում է «Արքունիքի տէր», այսինքն՝ արքունապետ:

[87] Նոյն. նաեւ՝ Հ. Գ. Ժամկոչեան, «Անի քաղաքի 13րդ դարի երկու արձանագրութեան մասին», Վ.. Մ. Մոլատովի անուան Երեւանի պետ. համալսարան, *Գիտական աշխատութիւններ*, 47:1955, էջ 92:

[88] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 142:

[89] Համաձայն Սահիբ Դիւանի կտակի նշում՝ «*Եթէ որդիս Աթաբէկը եւ նրա մայր Խոշաք խաթունը ցանկանան ուղեւորուել հայրենիք, ապա նրանց թող թոյլատրուի այդ*» (Рашид ад-Дин, էջ 115-16):

[90] Ժամկոչեան, էջ 97:

[91] Գ. Յովսէփեան, *Նիւթեր*, էջ 221: Իշխանի մահուան թուականը հայագէտինն է:

[92] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 142:

Ուշագրաւ է, որ Սիւնեաց պատմիչը Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ.ի իշխանական կալուածքը ներկայացնում է ոչ աշխարհագրական տարածքով. «*Եւ էր ընդ նոսա թագաւորն Դեմետրէ, զոր սիրեաց Արղունն, եւ եւր նմա զամենայն* ***աշխարհս Հայոց***՝ *զկունն Աւագեան եւ զկունն Շահանշահեան եւ զԳագեցին եւ* ***զորդիսն Սադուն*** *աթաբէկին*»[93]: Ըստ Ստեփանոս Օրբէլեանի՝ նշեալ վկայութեան, դէպքը կատարուած պէտք է լինի 1285ին, քանի որ պատմիչն ընդգծում է «զորդիսն Սադուն աթաբէկին», այսինքն՝ Արծրունի Սադուն Բ.ը վախճանուած է, ողջ չէ, եւ իշխանապետութիւնը ստանձնել էին վերջինիս որդիները: Վրացական աղբիւրի վկայութեամ, հաւանական է, 1270ականների առաջին կէսին Մահկանաբերդցի իշխանը տիրացել է Վրաստանում մի շարք բնակավայրերի, ինչպիսիք են Դմանիսը, Թելաւն ու Բելաքանը[94]:

Վրաստանի պատմութիւն դասագրքի հեղինակները հաստատում են, թէ Մահկանաբերդցի Սադուն Արծրունին ձեռք է բերել «ինը տարուայ թարխանութիւն» եւ ազատուել բոլոր տեսակի հարկերից: Վերջինս չնչին գումարով վրացական աւատատէրերից գնել է բազմաթիւ հողեր եւ նրա մօտ հեռաւոր շրջաններից եկել են գիւղացիական հոծ խմբեր, որի պատճառով վրաց աւատատէրերը լցուել են ոխակալութեամբ ու չարութեամբ, սակայն ոչ թագաւորը եւ ոչ էլ նրանք անկարող են եղել որեւէ ձեւով միջամտելու. «*Սադունը վրաց ֆէոդալներից էժանագին գնել է մարդկանցից դատարկուած ու արժեզրկուած կալուածքները: Հեռաւոր շրջաններից նրա մօտ են եկել գործազուրկ գիւղացիները: Այդ պատճառով վրաց ֆէոդալները ոխակալութեամբ էին տրամադրուել Սադունի դէմ: Բայց թագաւորը եւ ֆէոդալները անկարող էին ժամիշխանին ոչինչ անել, որովհետեւ նա խանի վստահելի անձն էր*»[95]: Զարմանալի է յիշեալ վկայութեան փաստագրումը, երբ *Քարթլիս ցխովրեբայ*ի լիակատար ռուսերէն օրինակում եւ հայերէն զոյգ թարգմանութիւններում նման յիշատակութիւն բացակայում է:

Մատենագրական տեղեկութիւններից ելնելով՝ կարելի է ասել, ակներեւաբար, Սադուն Բ.ի կալուածքները աւելի ընդարձակ եղել են Վրաստանում եւ, գուցէ այդ է պատճառը, որ Սիւնեաց պատմիչը վերջինիս հողային տարածքը բնորոշում է «**զորդիսն** Սադուն աթաբէկին» անորոշ արտայայտութեամբ, ինչը համոզիչ եւ ընդունելի չէ, քանի որ Արծրունի Սադուն Բ.ը «Գիւրջիստանի վիլայէթի» ամիրսպասալար, աթաբէկն է:

---

[93] Օրբէլեան, էջ 426: Նշեալ տեղեկութիւնը յայտնում է նաեւ վրացական աղբիւրը. «*Տեսնելով Դիմիտրէին, խանը գթաց... ողջ թագաւորութիւնը տուեց նրան, բացի Սարգիս Ջաղելու [երկրից]*» (*Վրաց ժամանակագրութիւն*, էջ 140):

[94] «*Բայց այնուամենայնիւ Սադունի ձեռքում էր [թագաւորը], որովհետեւ խանը Սադունին յուժ զօրեղացրեց: Դիմիտրէ թագաւորի իրաւասութիւնից հանեց Թելաւն ու Բելաքանը*» *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 142:

[95] Н. А. Бердзнишвили, В. Д. Дондуа, *История Грузии* (Վրաստանի պատմութիւն) *1*, Թբիլիսի, 1946, էջ 245:

Ամփոփելով՝ Մահկանաբերդցի Արծրունի Սադուն Բ.ը 1256/57ին պատմիչ Գրիգոր Ակնեցու վկայութեամբ՝ Հորդայում մոնղոլական աւագանու եւ իլխան Հուլաւուի ներկայութեամբ ըմբշամարտում գետնել է մեծ խան Մանգուի անպարտելի ըմբշին եւ արժանացել նրա գովասանքին, մեծարանքին ու պատիւներին[96]: Այնուհետեւ 1258/60ին մասնակցել է Հուլաւուի կողմից կազմակերպուած ասորական արշաւանքին, հաւանաբար, Պոռշ Խաղբակեանի գլխաւորութեամբ[97]: Արշաւանքի ընթացքում իշխանը դարձել է գրաւած Սասուն գաւառի ղեկավարը[98]: 1261/62ին նա Հորդայում «Թագաւորի ու խանի զրոյցի ժամանակ»[99] թարգմանչի դեր է կատարել: 1271/72ին դարձել է «Գիւրջիստանի վիլայէթի» աթաբէկ, ամիրսպասալար: Այս նոյն թուականներին նա ստանձնել է Աւագեան աւատական տան հեջուբ-սենեկապետ-արարողապետութիւնը: Աթաբէկ ամիրսպասալար Արծրունի Սադուն Բ.ն մահացել է 1284ին եւ թաղուել Հաղպատի Ս. Նշան եկեղեցու ժամատանը «Այս է հանգիստ Սաթունին»[100]:

THE ATABEK, AMIRSPASALAR TITLES OF SADUN II OF MAHKANABERD ACCORDING TO EPIGRAPHIC SOURCES
(SUMMARY)

RUBEN GASPARYAN
ruga52@mail.ru; arevikgapoyan@mail.ru

Sadun II Artsruni Mahkanaberdtsi, a figure from the 13th century, stands out as one of the prominent individuals of the late Armenian authoritarian regime. He earned recognition and honors due to his remarkable victory over a giant Mongol wrestler in the presence of Ilkhan Hulavu and the entire Mongolian Council of Elders, likely in 1256/57. According to the historian Kirakos Gandzaketsu, the prince took part in the Assyrian campaign of 1258/60. In 1261/62, he was a "trial interlocutor" serving as a translator during the trial concerning the rebellion of Georgian king David E., whom he exonerated. By 1271/72, the prince ascended to the position of atabek, amirspasalar of the "Vilayet of Georgia". Concurrently, he undertook the role of hejub-manager of the Avagyan feud, likely holding this position until his death in 1284, and was buried in the renowned monastery of Haghpat.

---

[96] Այդ մասին մենք նախկինում գրել ենք եւ սոյն աշխատանքում չենք նշում («Սադուն Բ. Արծրունի իշխանի գործունէութիւնը վիմագիր եւ մատենագիր աղբիւրների մեկնաբանութեամբ», *Հանդէս ամսօրեայ*, 1-12:2018, էջ 379-401):

[97] Գանձակեցի, էջ 385:

[98] Նոյն, էջ 386:

[99] *Վրաց ժամանակագրութիւն*, էջ 121:

[100] Ղաֆադարեան, *Հաղպատ*, էջ 189. նաեւ՝ *Դիւան, 9րդ պրակ*, էջ 176: